ՀՏԴ : 281.6 + 947.925

Doi:10.54503/0135-0536-2025.2-34

ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (428–630-ական թվականներ)*

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Մարզպանական Հայաստան, Ուխտանես եպիսկոպոս, թեմ, եպիսկոպոսություն, եկեղեցաժողով, Բագրևանդ, Մարդպետական:

Ամփոփում

Հայոց եկեղեցին իր կառուցվածքով և գործառույթներով հայկական պետականության անբաժանելի մաս է կազմում: Եկեղեցու պատմության, թեմական կառուցվածքի, առանձին թեմերի անցած ուղու և կարգավիճակի, պետություն-եկեղեցի, եկեղեցի-իշխանական դաս հարաբերությունների, ինչպես նաև անկախ պետականության բացակայության պայմաններում եկեղեցու արտաքին փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ձեռք է բերում կարևոր նշանակություն:

Թեմական կառուցվածքը, հատկապես՝ մարզպանական ժամանակաշրջանում, թեև ուսումնասիրվել է, սակայն դրանք չեն արտացոլում ամբողջական թեմերի գոյությունը: Հիմնվելով հիմնականում եկեղեցաժողովներում ներկա գտնված եպիսկոպոսների ցանկի վրա՝ արձանագրել ենք թեմերի գոյությունն ու համեմատել դրանք տվյալ շրջանի քաղաքական և վարչական բաժանման հետ:

Հայտնի է, որ եկեղեցական թեմական բաժանումը մեծամասամբ համընկել է երկրի քաղաքական և վարչական կառուցվածքի հետ: Այս տեսանկյունից՝ Արշակունյաց հարստության անկումից հետո՝ 428 թ., Մարզպանական Հայաստանի սահմաններում ձևավորված եկեղեցական կառուցվածքը նույնպես պետք է համապատասխաներ այդ ժամանակի վարչական սահմաններին: Աղբյուրների վերլուծությունից պարզ է դառնում, որ քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո Մեծ Հայքի առաջին կաթողիկոս Սբ Գրիգոր Լուսավորիչը (301–325) հաստատել է 36 եպիսկոպոսական աթոռ: Եկեղեցական ժողովների արձանագրություններից, ինչպես նաև պատմագիրների փոխանցած եպիսկոպոսների ցուցակներից տեղեկանում ենք մարզպանական ժամանակաշրջանի թեմական կառուցվածքի վերաբերյալ:

Հիմնվելով բացառապես Եղիշեի և Ղազար Փարպեցու եպիսկոպոսական ցանկերի վկայությունների վրա՝ եզրակացվել է, որ Մարզպանական Հայաստանում եղել են ընդամենը 18 թեմ, որոնք հետագայում ավելացել են: Սակայն

* *Ներկայացվել է 26. III. 2025 թ., գրախոսվել է 28. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

աղբյուրների և ժողովների վկայությունների համադրությունը փաստում է, որ թեմերի թիվն ավելի շատ է եղել, և, ընդհանրապես, մարզպանական շրջան (428–630-ական թվականներ) եզրույթն ընդգրկուն է ու պահանջում է ժամանակագրական ճշգրտում՝ ըստ կոնկրետ շրջափուլի:

Նախաբան

Ուսումնասիրելով եկեղեցու պատմությունը, թեմական կառուցվածքը, առանձին թեմերի եկեղեցու պատմությունն ու կարգավիճակը, վեր են հանվում պետություն-եկեղեցի, եկեղեցի-վերնախավ (նախարարներ), ինչպես նաև անկախ պետության բացակայության պարագայում եկեղեցի-օտար երկրներ հարաբերություններն առավել ճշգրիտ դիտարկմամբ: Ճիշտ է, այս կամ այն կերպ անդրադարձ է եղել մարզպանական շրջանի թեմական կառուցվածքին, սակայն դա, ըստ էության, ցույց չի տալիս իրական պատկերը: Քննելով սկզբնաղբյուրներում վկայված թեմերի գոյության արձանագրումը և դրանց համադրումը քաղաքական վարչական բաժանմանը՝ կատարվել են համապատասխան եզրակացություններ:

Հայ վաղմիջնադարյան սկզբնաղբյուրները թեմերի մասին

Հայտնի է, որ եկեղեցական թեմականը համապատասխանում էր երկրի քաղաքական, վարչական բաժանմանը: Այս տեսակետից Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո՝ 428 թ. սկսած, եկեղեցական թեմական բաժանումը պետք է հիմնականում համապատասխաներ արդեն Մարզպանական Հայաստանի սահմաններին: Աղբյուրների քննությունից պարզվել է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակման ժամանակներում Սբ Գրիգոր Լուսավորիչը հաստատել էր 36 եպիսկոպոսական աթոռ[1]: Եկեղեցական ժողովների ցուցակներից, ինչպես նաև պատմիչների կողմից եպիսկոպոսների ցանկերի վերաբերյալ պահպանած տեղեկություններից իմանում ենք մարզպանական շրջանի թեմական բաժանման մասին: Այսպես, Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակված 30 թեմերը, ինչպես կարծում է Բ. Հարությունյանը, վերաբերում են մարզպանական շրջանին: Դրանք են.

Աղյուսակ 1

		Ուխտանես[2]		
Հարքայ եպ.	Սյունեաց	Բագրեւանդայ	Գողթան	Անձեւացեաց
Ոստան	Ռշտունեաց	Խորխոռունեաց	Գարդմանայ	Պալունեաց
Տայոց	Մոկաց	Վանանդայ	Ակէոյ	Մեհնունեաց
Մարդաղոյ	Ամատունեաց	Ապահունեաց	Բուժունեաց	Ելոյ
Արշամունեաց	Բասենոյ	Արշարունեաց	Երուտակաց	Զարեւհանից
Արծրունեաց	Մամկոնէից	Գնունեաց	Ասորեաց	Միւսաւորեաց

[1] *Տե՛ս Հարությունյան. 2000, 126:*
[2] *Ուխտանէս եպիսկոպոս. 2011, 503:*

Այս ցանկից կարելի է եզրակացնել դրա՝ մարզպանական շրջանին վերաբերելը, քանի որ այստեղ հստակ բացակայում են Արշակունյաց թագավորության շրջանի ծայրագավառների եպիսկոպոսությունները: Սակայն մարզպանական շրջանը (428–630-ական թվականներ) բավականին լայն հասկացություն է: Խոսքը դրանում հիշատակված Գարդմանի մասին է, որը Մարզպանական Հայաստանի կազմում է եղել մինչև 451 թ.[3], որով ինքնին սահմանազատում է դրվում այս կամ այն եպիսկոպոսության գոյության կամ վարչական պատկանելիության հարցում: Այս շրջանին վերաբերող հաջորդ աղբյուրները ստորև բերվող Եղիշեի ու Ղազար Փարպեցու եպիսկոպոսական ցանկերն են:

Աղյուսակ 2

Եղիշե[4]	Ղազար Փարպեցի[5]
Յովսէփ եպ. Այրարատոյ	Յովսէփ կաթողիկոս Հայոց
Սահակ եպ. Տարաւնոյ	Անանիա Սիւնեաց եպ.
Մեղէտ եպ. Մանազկերտոյ	Մուշէ Արծրունեաց եպ.
Եղնիկ եպ. Բագրեւանդայ	Սահակ Տարաւնոյ եպ.
Սուրմակ եպ. Բզնունեաց	Սահակ Ըռշտունեաց եպ.
Տաճատ եպ. Տայոց	Մելիտէ Մանձկերտոյ եպ.
Թաթիկ եպ. Բասենոյ	Եղնիկ Բագրեւանդեայ եպ.
Քաոս եպ. Տուրուբերանոյ	Սուրմակ Բզնունեաց եպ.
Երեմիա եպ. Մարդաստանի	Թաթիկ Բասենոյ եպ.
Եւղաղ եպ. Մարդոյաղւոյ	Երեմիա Մարդաստանի եպ.
Անանիա եպ. Սիւնեաց	Գաղ Վանանդեայ եպ.
Մուշէ եպ. Արծրունեաց	Բասիլ Մոկաց եպ.
Սահակ եպ. Ռըշտունեաց	Եղբայր Անձեւացեաց եպ.
Բասիլ եպ. Մոկաց	Տաճատ Տայոց եպ.
Գաղ եպ. Վանանդայ	Քաոսն Տարբերունոյ եպ.
Եղիշա եպ. Ամատունեաց	Զաւէն Մանանաղւոյ եպ.
Եղբայր եպ. Անձեւացեաց	Եղիշէ Ամատունեաց եպ.
Երեմիա եպ. Ապահունեաց	Երեմիա Ապահունեաց եպ.

Երկու պատմիչների մոտ ներկայացված են գրեթե նույն ցանկերը: Բացառություն է կազմում Եղիշեի մոտ Մարդաղիի եպ. և Ղազար Փարպեցու մոտ Մանանաղիի եպ. հիշատակումը: Մանանաղիի եպ., մեր կարծիքով, վրիպմամբ է նշվել, քանզի այն ոչ միայն դուրս էր Մարզպանական Հայաստանի սահմաններից, այլև հետագա աղբյուրներում այլևս չի հիշատակվում:

[3] *Հարությունյան. 2000, 111:*
[4] *Եղիշէ. 2003, 549–550:*
[5] *Փարպեցի. 2003, 2242:*

Նկատենք, որ այս ցանկերն ամբողջական չեն, ինչպես ենթադրվում է[6], այլ վերաբերում են Արտաշատի 450 թ. ժողովին ներկա եպիսկոպոսներին: Այստեղ բացակայում են Արշարունյաց, Բագրատունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Պալունյաց, Գողթան, Ակեի, Բուժունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի եպիսկոպոսությունները, որոնց գոյությունն անհերքելի է այլ աղբյուրներից: Եթե խոսքը գնար հայ Արշակունիների թագավորական շրջանի թեմական բաժանման մասին, ապա իրավացիորեն կարող էինք նշել, որ այդ եպիսկոպոսությունները հետագա տրոհման կամ ճյուղավորման արդյունք էին: Սակայն բացակայող թեմերը հենց մարզպանական շրջանում արդեն իսկ պետք է առկա լինեին, իսկ դրանցից առնվազն չորսը՝ Արշարունյացը, Բագրատունյացը, Գնունյացն ու Խոռխոռունյացը, թագավորական շրջանից:

Ի դեպ, Արշարունյաց թեմ գոյություն է ունեցել թեմական բաժանման հենց սկզբից: Արտաշատի ժողովին այդ թեմի եպիսկոպոսի չմասնակցելը և դրանով իսկ չհիշատակումը բացառվում է, քանի որ Կամսարական նախարարությունը սկզբից ևեթ կանգնած էր Հայոց եկեղեցու և սպարապետ Վարդան Մամիկոնյանի կողքին և, անկասկած, պետք է ներկա լիներ այդօրինակ ժողովին: Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ Ներսես Ա Մեծ (353–373) կաթողիկոսը խաղին ձեռնադրել էր որպես Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս[7]: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, թե ինչու ցանկում չկա Արշարունյաց եպիսկոպոսի անունը, որովհետև այն Բագրևանդի հետ կազմում էր մեկ միասնական թեմ[8]: Նշենք, որ Բագրևանդի ու Արշարունիքի եպիսկոպոսությունները հիշատակվում են իրարից արդեն առանձին VI դ. գումարված ժողովներից սկսած, ինչը նշանակում է՝ եպիսկոպոսությունը V դ. վերջերից արդեն տրոհվել էր[9]:

Ա. Ղազարյանի կարծիքով՝ Եղիշեի ու Փարպեցու մոտ հիշատակված Տուրուբերանի եպիսկոպոսությունը պետք է համապատասխաներ Արշամունյաց եպիսկոպոսությանը[10]: Սա հիմնավոր է թվում, քանի որ այդպիսով Տուրուբերան աշխարհի եպիսկոպոսություններն ամբողջանում են. դրանք են՝ Տարոնի, Բզնունյաց, Արշամունյաց, Մարդաղիի, Խոռխոռունյաց, Մանազկերտի (Հարքի)[11], Ապահունյաց ու Գնունյաց:

Բագրատունյաց թեմի գոյության հարցը

Եթե Արշարունյաց եպիսկոպոսի բացակայությունը Եղիշեի ու Ղազար Փարպեցու ցանկերում հասկանալի է, ապա նույնը չի կարելի ասել Բագրատունի-

---

[6] *Պատմաբան Ռ. Հարությունյանը գտնում է, որ Մարզպանական Հայաստանում առկա էին ընդամենը եկեղեցական 18 թեմ (Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2008, 147):*

[7] *Բ ո ւ զ ա ն դ. 2003, 334:*

[8] *Մ ա ն ո ւ չ ա ր յ ա ն. 2021, 187–189:*

[9] *Ա լ ի շ ա ն. 1890, 523:*

[10] *Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 97:*

[11] *Մինչև V դ. կեսերը Հարքի թեմը կոչվել է Մանազկերտի և միայն 450 թ. Արտաշատի ժողովից հետո այն անվանվել է Հարքի եպիսկոպոսություն (Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 99):*

ների վերաբերյալ, որոնց, ըստ Նիկողայոս Ադոնցի, կարելի է տեսնել Բագրևանդի եպիսկոպոսության կազմում[12]: Խնդիրն այն է, որ Բագրևանդ գավառը մեծամասամբ պատկանում էր Գրիգոր Լուսավորչի տոհմին, որը Սահակ Պարթևի (388–439) կտակով անցել էր Մամիկոնյաններին[13]: Այս համատեքստում, եթե ընդունենք, որ Բագրևանդի եպիսկոպոսությունը համապատասխանում է Բագրատունի նախարարությանը, ապա ոչ ամբողջ գավառի ընդգրկմամբ՝ միայն Բագավանն իր շրջակայքով: Տվյալ դեպքում էլ հարց է առաջանում, արդյո՞ք այս ընդգրկմամբ թեմը կարող էր կոչվել Բագրևանդի. իհարկե՝ ոչ: Ըստ Բ. Հարությունյանի՝ Բագրևանդն ու Կոգովիտը կազմել են մեկ միասնական թեմ[14]: Սա թվում է տրամաբանական, քանի որ Մարզպանական Հայաստանում Բագրատունիների տիրույթներն ամփոփված էին Կոգովիտ, Ծաղկոտն գավառներում և Բագավանի շրջակայքում[15]:

Սակայն դա հնարավոր չէր V դ. համար, քանզի այդ շրջանում Բագրևանդն Արշարունիքի հետ կազմում էր մեկ թեմ: Բագրևանդի ու Կոգովիտի միասնական հանդես գալը կարող էր հնարավոր լինել, օրինակ, VI դ., որը, սակայն, ենթադրություն է: Դարձյալ Արշարունիքի օրինակով նշենք, որ Բագրատունյաց թեմ արքայական շրջանում, անկասկած, պետք է ստեղծվեր: Ագաթանգեղոսի պատմության հունական տարբերակը հաղորդում է Գրիգոր Լուսավորչի կողմից Սպերում եպիսկոպոսի նշանակման մասին[16]: Ճիշտ է, 387 թ. բաժանմամբ Սպերը մնացել էր Արևելահռոմեական կայսրության կազմում, սակայն Բագրատունիները հողատիրույթներ ունեին Մարզպանական Հայաստանում ևս, որոնց շարքում էր, ինչպես նշվեց, Կոգովիտ գավառը: Այս համատեքստում հասկանալի է, որ 450 թ. Վասակ Սյունու կողմնակից Տիրոց Բագրատունին հենց Կոգովիտի Բագրատունիների ներկայացուցիչն էր[17], քանի որ Սպերը, ինչպես նշվեց, Արևելահռոմեական կայսրության մեջ էր:

Եղիշեի ու Ղազար Փարպեցու ցանկերում Բագրատունյաց եպիսկոպոսի բացակայությունն առաջին հերթին կապված էր եպիսկոպոսությունների ոչ ամբողջական ցանկով, իսկ, օրինակ, Խոռխոռունյաց եպիսկոպոսության բացակայությունն Արտաշատի 450 թ. ժողովին, բացատրվում է ոչ թե նրա չգոյության, այլ նրա՝ ժողովից խուսափելու հանգամանքով, ինչն արդյունք էր Գաղիշո Խոռխոռունու հակապատմական տրամադրությունների[18]: Ուստի տրամաբանական է կարծել, որ տվյալ դեպքում ևս, որպես Վասակ Սյունու կողմնակիցներ, Խոռխոռունիներից բացի, պետք է ավելացնել նաև Բագրատունյաց և Պալունյաց թեմերը, որոնք ևս իրենց ներկայացուցիչներին չէին ուղարկել ժողովին:

---

[12] *Ա դ ո ն ց. 1987, 376: Դեռևս Ն. Ադոնցն է նկատել, որ Բագրևանդը պետք է կապված լիներ Բագրատունի նախարարների սկզբնական տիրույթների հետ (Ա դ ո ն ց. 1987, 341): Այս լույսի ներքո իսկապես տրամաբանական է Բագրատունյաց թեմը տեսնել Բագրևանդի եպիսկոպոսության կազմում:*

[13] *Փ ա ր պ ե ց ի. 2003, 2235:*

[14] *Հայաստանի ազգային ատլաս. 2008, 135:*

[15] Х а ч а т р я н. 2022, 51–53.

[16] *Բ ա ր թ ի կ յ ա ն, Տ ե ր-Ղ և ո ն դ յ ա ն. 2002, 178:*

[17] *Ա դ ո ն ց. 1987, 341:*

[18] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2000, 113–114, 116:*

Հայ եկեղեցաժողովների վավերաթղթերում հիշատակված թեմերը

Հաջորդ աղբյուրները, որոնք պատկերացում են տալիս Մարզպանական Հայաստանի թեմական բաժանման վերաբերյալ, եկեղեցաժողովների վավերաթղթերն են: Այստեղ չեն ներառվում հայ մատենագիրների երկերում առկա եպիսկոպոսների կամ եպիսկոպոսությունների մասին հաղորդումները, քանի որ դրանք, ըստ էության, ոչինչ չեն ավելացնում եկեղեցաժողովների ցանկերին:

Աղյուսակ 3

Դվինի Ա (506 թ.) ժողով[19]	Ներսես կաթողիկոսի մեղադրական թուղթը (VI դ. կեսեր)[20]	Դվինի Բ (555 թ.) ժողով[21]	Դվինի Դ (645 թ.) ժողով[22]
Մամիկոնէից եպ.	Արծրունեաց եպ.	Տարաւնոյ եւ Մամիկոնէից եպ.	Ոստան եւ Մարզպետական եպ.
Մարզպետական	Ռշտունեաց	Սեպհական գնդին	Հարքայ
Հարքայ	Մոկաց	Հարքայ	Բասենոյ
Բզնունեաց	Անձեւացեաց	Բագրեւանդայ	Տայոց
Բասենոյ	Ակռոյ	Բասենոյ	Մարդաղոյ
Արշարունեաց	Պալունեաց	Մարդաղոյ	Բզնունեաց
Խոռխոռունեաց	Զարեհաւանից	Արշամունեաց	Արշարունեաց
Տայոց	Բժնունեաց	Սիւնեաց	Բագրատունեաց
Արշամունեաց	Մեհնունեաց	Արծրունեաց	Խորխոռունեաց
Ռշտունեաց	Տարաւնոյ եւ Մամիկոնէից	Խոռխոռունեաց	Ռշտունեաց
Մոկաց	Մարզպետական	Ապահունեաց	Վանանդայ
Արծրունեաց	Հարքայ	Աւորեաց	Աշմունեաց
Ամատունեաց	Բագրեւանդայ	Վանանդայ	Ամատունեաց
Պալունեաց	Բասենոյ	Արշարունեաց	Անձաւացեաց
Գնունեաց	Սիւնեաց	Պալունեաց	Գնունեաց
Զարեհունի	Խոռխոռունեաց	Գողթան	Պալունեաց
Տմորեաց	Ամատունեաց	Մեհնունեաց	Մեհնունեաց
Անձեւացեաց			
Մեհնունեաց			

Ինչպես կարելի է նկատել վերոբերյալ աղյուսակային ցանկերից, Բագրատունյաց նախարարության եպիսկոպոսության ուղղակի հիշատակում բացառությամբ Դվինի Դ (645 թ.) ժողովի, աղբյուրներում թվարկված եպիսկոպոսությունների մեջ չենք հանդիպում (օրինակ՝ «Բագրատունյաց եպ.», «Սպերի եպ.» կամ «Կոգովիտի եպ.» ձևերով): Բագրատունյաց թեմի չհիշատակվելը, սակայն, չի նշանակում, որ այն առաջացել է VII դ.: Այդ հիշատակումների

[19] *Ութմսեցի. 2004, 117:*
[20] *Բագրեւանդացի. 2004, 418:*
[21] *Բագրեւանդացի. 2004, 420:*
[22] *Կանոնագիրք Հայոց. 1971, 214–215:*

բացակայությունը, թերևս, կարելի է ենթադրել, կապված էին արդեն VI դ. սկսած Բագրևանդի ու Կոգովիտի մեկ թեմ կազմելու հանգամանքով, այսինքն՝ Բագրատունյաց տիրույթ Կոգովիտը մտնում էր Բագրևանդի թեմի մեջ և գլխավոր միավորի անունով կոչվում Բագրևանդի: Բագրևանդն ու Կոգովիտը VII դ. դարձյալ առանձնանում են:

Անդրադառնանք Հայոց Ներսես Բ Բագրևանդցի (548–557) կաթողիկոսի մեղադրական թղթում հիշատակված «Բժնունյաց» եպիսկոպոսին: Կարելի է կարծել, թե խոսքը Բզնունյաց եպիսկոպոսի մասին է, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նեստորականության մեջ մեղադրվող եպիսկոպոսներին ուղղված թղթում հիշատակված, այնուհետև Դվինի Բ ժողովին չմասնակցած եպիսկոպոսները միմիայն Վասպուրականից էին՝ Ռշտունյաց, Մոկաց, Անձևացյաց, Ակեի, Զարեհավանի, Ամատունյաց և Բժնունյաց: Ուստի խոսքը Վասպուրականի Բուժունյաց եպիսկոպոսության մասին է և ոչ թե Բզնունյաց[23]: Բուժունյաց եպիսկոպոսության գոյությունը փաստում են Ուխտանեսի և Դվինի Գ (608 թ.) ժողովի եպիսկոպոսների ցանկերը[24]:

Կարևոր է նաև անդրադառնալ Մարդպետականի եպիսկոպոսի խնդրին: Տեսնում ենք, որ Դվինի Ա ժողովում արդեն հիշատակված է ոչ թե Մարդաստանի, այլ՝ Մարդպետականի եպիսկոպոսը: Վերջինիս հիշատակում են նաև Մովսես Դասխուրանցին[25] ու Թովմա Արծրունին[26]: Սակայն սրանք նույն վարչական միավորները չեն, քանի որ Վասպուրականի Մարդաստան գավառը գտնվում էր Արտազ և Գառնի գավառների միջև, իսկ Մարդպետականը սկզբում տարածվում էր «յԱտրպատականէ մինչեւ ցՃուաշ եւ ցՆախճաւան»[27]: Հետագայում Մարդպետականի տիրույթներն ընդլայնվել են, ինչի արդյունքում Մարդպետականի եպիսկոպոսական աթոռը Նախճավան քաղաքից տեղափոխվել էր Մարդաստան գավառի Համբույրազան ավան[28], այսինքն՝ Մարդաստան գավառը մտել էր Մարդպետականի մեջ: Բացի այդ, Ներսես Բ կաթողիկոսի գլխավորած ժողովներում Մարդպետականի եպիսկոպոսը հիշատակվում է նաև որպես Սեպհական գնդի եպիսկոպոս, ինչը ցույց է տալիս, որ դրանք նույնարժեք են[29]: Կապված քաղաքական հանգամանքներով՝ Սեպհական գունդ/Վասպուրական գունդ[30] անվանումներն ընդհանրական ամրանում են այն տարածքների վրա, որոնք հետագայում մտան Արծրունյաց թագավորության կազմ:

---

[23] Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 96:

[24] Գիրք թղթոց. 1994, 298:

[25] Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 2011, 168, 344, 346:

[26] Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 158:

[27] Խ ո ր ե ն ա ց ի. 1991, 112:

[28] Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 246:

[29] В а р д а н я н. 2018, 29.

[30] Որպես եպիսկոպոսություն Մարդպետական և Սեպհական գունդը համարժեք են: Լայն իմաստով Սեպհական գունդը համարժեք էր Վասպուրականին, իսկ այս համատեքստում Մարդպետականը համազոր չէր կարող լինել Վասպուրականին (Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. 1969, 141–145):


ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (428-451 թթ.)
Սասանյան Դարպասատան և Հռոմեական կայսրության միջև 387 թ.
Արդարանական Հայաստան ամենաընդարձակ շրջանում 428-451 թթ.
Սասանյան Դարպասատան նահանգապետությունների սահմանները
Եկեղեցու թեմերի դատ նախարարության տիրույթների սահմանները
Արվանից Արշակունի արքային շնորհված տիրույթ
արտաշատ Քաղաքային կենտրոններ
Քաղաքներ
Մանավազակներ Փոքր բարքեր, գիր-ուռուցիներ, ավխներ
Վարդաշատական Կաթողիկոսության կենտրոն
Գնդեհար Հանքեր, հեղեցիներ
Անգեղ Ծիրեր, ամրոցներ
Մասշտաբ 1:2 300 000 (1սմ=23կմ)
Կապուտան [Սևի] ծով
Գեղարքունիք [Սևանա լիճ]
© ա.գ.գ. Հեղինի հանգամանքի
քարտեզագրում և գարդարանքի

Քարտեզ 1

Մեզ ծանոթ թեմերին, որոնք կա՛մ գավառի, կա՛մ նախարարության անվամբ են հանդես գալիս, մնում է ավելացնել Ուխտանեսի ցանկում հիշատակված չորս՝ «Երուտակաց», «Ասորեաց», «Ելոյ» և «Միւսասորեաց» եպիսկոպոսությունները:

Այսպես, Ելոյ (Եղոյ, Էղոյ) եպիսկոպոսությունը համապատասխանում է Պարսկահայք նահանգի Այլի գավառին[31]: Ասորյաց եպիսկոպոսությունը կարելի է նույնացնել Դվինի Ա ժողովից հայտնի Տմորյացի հետ[32], իսկ մյուս ասորյացը կամ պետք է ընդգրկեր Կորդիք գավառը, կամ էլ՝ Տմորիքի մի հատվածը[33]: Այսպես՝ Ա. Ղազարյանն Երուտակը (Առուտակ, Ռուտակ) համարում է VII դ. սկզբին եկեղեցական թղթերում միայն հիշատակվող Առանի (Առնայոյ, Առնոյ, Առանայ) եպիսկոպոսությունը, որը, ըստ նրա, գտնվում էր Ուտիք նահանգում[34]: Ն. Ադոնցը սահմանազատում էր Երուտակի ու «Առնայ»-ի եպիսկոպոսությունները՝ նշելով, որ առաջինը դա Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Ռոտակ (Ռոստակ) նահանգն է (Հեր և Զարավանդ գավառներ), իսկ «Առնայ»-ը՝ Պարսկահայքի Առնա գավառը, որը մտել է Էլի կամ Այլի եպիսկոպոսության կազմի մեջ[35]: Ընդհանուր առմամբ, Ն. Ադոնցի փաստարկներն ավելի հիմնավոր և ընդունելի են, քան Ա. Ղազարյանինը: Համաձայնվելով, որ Երուտակն ու Առնան առանձին եպիսկոպոսություններ են, այնուամենայնիվ, համամիտ չենք, որ Առնայի եպիսկոպոսությունը ներառվել է Այլիի կազմում, քանի որ այդ դեպքում այն ավելի շուտ պետք է մտներ Զարեհավանի եպիսկոպոսության մեջ (տե՛ս քարտեզ 1):

Վերոբերյալ եկեղեցաժողովների ցանկերի արդյունքում ունենում ենք մարզպանական շրջանի համար հետևյալ հիմնական թեմերը՝ Այրարատի (Ոստան), Տարոնի (Մամիկոնյան), Մանազկերտի (Հարքի), Բագրևանդի (Բագրատունյաց), Բզնունյաց, Տայքի, Բասենի, Մարդաստանի (V դ. վերջերից՝ Մարդպետական / Սեպհական գնդի), Մարդաղիի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Արշամունյաց, Խոռխոռունյաց, Արշարունյաց, Գնունյաց, Գողթան, Գարդմանի (մինչև 451 թ.), Ակեի, Բուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Այլիի (Ելո), Առնայի, Երուտակի ու Տմորիքի (Ասորյաց):

Ինչպես նշվեց, եկեղեցական թեմական բաժանումը հիմնականում համապատասխանում էր երկրի վարչաքաղաքական բաժանմանը, ուստի եպիսկոպոսությունները համադրենք նախարարություններին ու համապատասխան միավորներին և տեսնենք դրանց համարժեքությունը:

---

[31] *Ա դ ո ն ց. 1987, 372, ծան. 1: Մ. Օրմանյանը «Ելոյ»-ը համարում էր Հերը (Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 582):*

[32] *Ա դ ո ն ց. 1987, 370:*

[33] *Մ. Օրմանյանը Մյուսասորյաց եպիսկոպոսությունը համարել է Մարդպետականը (Օրմանեան. 2001, 582): Սակայն այդպիսի նույնականացումը հնարավոր չէ, քանզի, ինչպես նշվեց, Մարդպետականի եպիսկոպոսության կենտրոնը սկզբում Նախճավանում էր, ապա՝ Մարդաստան գավառի Համբույրազան ավանում, ինչն էլ բացառում է դրանց նույնացումը:*

[34] *Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 100:*

[35] *Ա դ ո ն ց. 1987, 372, ծան. 1, 373, ծան. 1, 2:*

Աղյուսակ 4

Եկեղեցական թեմեր	Նախարարություններ / գավառներ
Այրարատի (Ոստան) թեմ	Ոստան Հայոց/Դվին գավառ
Տարոնի թեմ	Մամիկոնյաններ
Մանազկերտի (Հարքի) թեմ	Ասորի Աղբիանոսյաններ
Բագրևանդի թեմ (Կոգովիտի հետ)	Բագրատունիներ
Բզնունյաց թեմ	Ասորի Աղբիանոսյաններ
Տայքի թեմ	Մամիկոնյաններ, Դիմաքսյաններ
Բասենի թեմ	Բասենացիներ
Մարդաստանի թեմ (V դ. վերջերից՝ Մարդպետական/Սեպհական դնդի)	Մարդպետական վարչական միավոր, որը գլխավորում էին Արծրունիները
Մարդալիի թեմ	Մարդալի գավառ
Սյունյաց թեմ (Արցախի հետ մինչև 451 թ.)	Սյունիներ
Արծրունյաց թեմ	Արծրունիներ
Ռշտունյաց թեմ	Ռշտունիներ
Մոկաց թեմ	Մոկացիներ
Վանանդի թեմ	Վանանդացիներ, Դիմաքսյաններ, Աբեղյաններ, Գաբեղյաններ, Հավնունիներ
Ամատունյաց թեմ	Ամատունիներ
Անձևացյաց թեմ	Անձևացիներ
Ապահունյաց թեմ	Ապահունիներ
Արշամունյաց թեմ	Մանդակունիներ (մինչև V դ. վերջ)
Խոռխոռունյաց թեմ	Խոռխոռունիներ
Արշարունյաց թեմ	Կամսարականներ, Դիմաքսյաններ, Սահառունիներ
Գնունյաց թեմ	Գնունիներ
Գողթնի թեմ	Գողթնացիներ
Գարդմանի թեմ (մինչև 451 թ.)	Գարդմանացիներ
Ակեի թեմ	Ակեացիներ
Բուժունյաց թեմ	Բուժունիք գավառ
Պալունյաց թեմ	Պալունիներ
Մեհնունյաց թեմ	Մեհնունիներ
Զարեհավանի թեմ	Զարեհավանցիներ
Այլիի (Ելո) թեմ	Այլի գավառ
Առնայի թեմ	Առնա գավառ
Երուտակի թեմ	Հեր և Զարավանդ գավառներ
Տմորիքի (Ասորյաց) թեմ	Տմորիք գավառ

Ինչպես երևում է աղյուսակից, մարզպանական շրջանի եպիսկոպոսական թեմերն իրենց քանակով և զբաղեցրած սահմաններով համապատասխանում էին երկրի վարչական բաժանմանը. այսինքն՝ դրա հիմքում ընկած էր հզոր նախարարական տոհմերի հողային տարածքը (տե՛ս քարտեզ 2):



Քարտեզ 2

Մարզպանական շրջանի համար ընդհանրական կոնկրետ թվով դժվար է ասել, թե եկեղեցական թեմերը քանիսն էին, որովհետև դրանցից որոշներն ինչ որ պահի եղել են առանձին կամ միասին: Օրինակ՝ Ագաթանգեղոսի պատմութ-յան հունական բնագրային տարբերակում նշվում է, որ Աղբիոսը կարգվել էր Տարոնի և Տայքի եպիսկոպոս[36], իսկ արաբական տարբերակում՝ Տարոնի և Բզնունիքի[37]: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ սկզբնական շրջանում Մամիկոնյանների եպիսկոպոսությունն ընդգրկում էր Տարոն, Տայք ու Բզնունիք (մի մասը) գավառները, որոնք հետագայում առանձնանում են: Փավստոս

[36] *Բ ա ր թ ի կ յ ա ն, Տ ե ր-Ղ և ո ն դ յ ա ն. 2002, 178:*
[37] M a p p. 1905, 139.

Բուզանդը նշում է Բագրևանդի ու Արշարունիքի միասնական թեմի գոյության մասին, որը նույնպես բաժանվում է: Հովհաննես Բ Գաբեղյան (557–574) կաթողիկոսի թղթում Բասենն ու Մարդաղին հիշատակվում են միասին, որպես մեկ թեմ[38], որոնք մինչ այդ առանձին էին: Այս համատեքստում է, որ դժվար է ստույգ ասել՝ աղբյուրներում այս կամ այն եպիսկոպոսության բացակայությունն ինչով էր պայմանավորված: Դա անպայման չէր, որ չգոյության հետևանք լիներ, այլ կարող էր ժողովին չներկայանալու, այլ թեմի ենթակա, այն է՝ ստորակա լինելու կամ ընդհանուր թեմի մեջ գտնվելու հետևանք լինել: Բայց և այնպես փորձենք աղբյուրներից հայտնի թեմերը (հաշվի առնելով նաև տվյալ շրջանում առկա նախարարությունները) բաժանել շրջանների՝ նշելով համապատասխան եպիսկոպոսությունները.

428–451 թթ. – Այրարատի (Ոստան), Տարոնի (Մամիկոնյան), Մանազկերտի (Հարքի), Բագրևանդի (Արշարունիքի հետ), Բզնունյաց, Տայոց, Բասենի, Մարդաղիի, Մարդաստանի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Տուրուբերանի (Արշամունյաց), Բագրատունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Գողթան, Գարդմանա, Ակեի, Բուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Տմորիքի, Այլիի:

506–630 թթ. – Այրարատի (Ոստան), Տարոնի և Մամիկոնյան, Հարքի, Բագրևանդի (Կոգովիտի հետ=Բագրատունիներ), Արշարունյաց, Բզնունյաց, Տայոց, Բասենի, Մարդաղիի, Ոստան և Մարզպետական / Սեպհական գնդի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Արշամունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Գողթան, Ակեի, Բուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Տմորիքի, Այլիի, Երուտակի, Առնայի:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել այն պնդումը, թե Մարզպանական Հայաստանում 428–451 թթ. առկա էր եպիսկոպոսական 18 թեմ, չի հաստատվում աղբյուրներով: Մարզպանական շրջանը լայն հասկացություն է և ընդգրկում է 428–630-ական թվականները, որով թեմերի քանակը կարելի է նշել 31: Թեմերը տարբեր պատճառներով մերթ մի քանի վարչամիավորներից կազմում էին միասնական եպիսկոպոսություն, մերթ՝ տրոհվում: Թեմերի կազմավորման մեջ նկատվում է ավատատիրական կարգերին համապատասխան վարչական բաժանումներ, ի դեմս հզոր նախարարական տոհմերի:

Հենրիկ Խաչատրյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ պատմական աշխարհագրություն, Հայաստանի և Իրանի իրավունքի պատմություն: Հեղինակ է 15 հոդվածի:
ORCID: 0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am

[38] *Գիրք թղթոց. 1994, 206, 210:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան», 640 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Ս. Ղազար, 590 էջ:

Ավդալբեգյան Թ. 1969, Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 490 էջ:

Բաբգէն կաթողիկոս Ոթմսեցի. 2004, Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս. – «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 117–124:

Բարթիկյան Հ., Տեր-Ղևոնդյան Ա. 2002, Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք). – «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 172–180:

Գիրք թղթոց. 1994, Երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 711 էջ:

Եղիշէ. 2003, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. – «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 521–764:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 46–313:

Կանոնագիրք Հայոց. 1971, հ. Բ, աշխատ.՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 476 էջ:

Հայաստանի ազգային ատլաս. 2008, հ. Բ, Երևան, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, 264 էջ:

Հարությունյան Բ. 2000, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում. – ՊԲՀ, № 2, էջ 108–127:

Հարությունյան Ռ. 2008, Հայ եկեղեցու թեմական բաժանումը Մարզպանական Հայաստանում.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 141–148:

Ղազար Փարպեցի. 2003, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 2201–2375:

Ղազարյան Ա. 1995, Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե–Է դարերում, «Էջմիածին», Զ-Է, էջ 94–103:

Մանուչարյան Ա. 2021, Արշարունյաց եպիսկոպոսական թեմը (IV–XI դդ.). – ՊԲՀ, № 3, էջ 187–202:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 490 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 2011, Պատմութիւն Աղուանից աշխարհի. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Ժ դար, Երեւան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 32–437:

Ներսէս Բագրեւանդացի. 2004, Թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն. – «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 418–420:

Ուխտանէս եպիսկոպոս. 2011, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, Ժ դար, Երեւան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 441–616:

Փաւստոս Բուզանդ. 2003, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 277–428:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 1870 սյունակ:

Варданян В. 2018, Очерки истории Васпураканского Армянского государства. Ереван, Изд. Института истории НАН РА, 375 с.

Марр Н. 1905, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия). СПб., “тип. Императорской академии наук”, 211 с.

Хачатрян Г. 2022, Нахарарские (княжеские) владения Марзпанской Армении (V–VI вв.). – ИФЖ, № 2, с. 47–62.

REFERENCES

Adonts’ N. 1987, Hayastany Hustinianosi darashrjanum. k’aghak’akan kats’ut’yuny yst nakhararakan kargeri, Yeryevan, «Hayastan», 640 ej (In Armenian).

Alishan Gh. 1890, Ayrarat. bnashkharh Hayastaneayts’, Venetik-S. Ghazar, 590 ej (In Armenian).

Avdalbegyan T’. 1969, Hayagitakan hetazotut’yunner, Yerevan, HSSH GA hrat., 490 ej (In Armenian).

Babgen kat’oghikos Vot’msets’i. 2004, T’ught’ Hayots’ i Parss, ar ughghap’ars. – «Matenagirk’ Hayots’», h. G, Z dar, Ant’ilias-Libanan, ej 117–124 (In Armenian).

Bart’ikyan H., Ter-Ghevondyan A. 2002, Agat’angeghosi patmut’yan huna-kan norahayt khmbagrut’yuny (Vark’). – «Hay-byuzandakan hetazotut’yunner», h. A, Yerevan, YePH hrat., ej 172–180 (In Armenian).

Ghazar P’arpets’i. 2003, Patmut’iwn Hayots’. – «Matenagirk’ Hayots’», h. B, Ye dar, Ant’ilias-Libanan, ej 2201–2375 (In Armenian).

Ghazaryan A. 1995, Hay Yekeghets’u t’emakan bazhanumy Ye–E darerum, «Ejmiatsin», Z-E, ej 94–103 (In Armenian).

Girk’ t’ght’ots’. 1994, Yerkrord hratarakut’iwn, Yerusaghem, tp. Srbots’ Yakobeants’, 711 ej (In Armenian).

Harut’yunyan B. 2000, Hayots’ yekeghets’u t’emakan bazhanumy Grigor Lusavorch’i hovvapetut’yan shrjanum. – PBH, № 2, ej 108–127 (In Armenian).

Harut’yunyan R. 2008, Hay yekeghets’u t’emakan bazhanumy Marzpanakan Hayastanum.– «Banber Yerevani hamalsarani», № 2, ej 141–148 (In Armenian).

Hayastani azgayin atlas. 2008, h. B, Yeryevan, «Geodeziayi yev k’arte-zagrut’yan kentron» POAK, 264 ej (In Armenian).

Kanonagirk’ Hayots’. 1971, h. B, ashkhat., Vazgen Hakobyani, Yerevan, HSSH GA hrat., 476 ej (In Armenian).

Khachatryan H. 2022, Nahararskie (knâžeskie) vladeniâ Marzpanskoj Armenii (V–VI vv.). – IFŽ, № 2, s. 47–62 (In Russian).

Manuch’aryan A. 2021, Arsharunyats’ yepiskoposakan t’emy (IV–XI dd.). – PBH, № 3, ej 187–202 (In Armenian).

Mar N. 1905, Kreŝenie armân, gruzin, abhazov i alanov svâtym Grigoriem (Arabskaâ versiâ), SPb., “tip. Imperatorskoj akademii nauk”, 211 s. (In Russian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Movses Kaghankatowats'i. 2011, Patmut'iwn Aghowanits' ashkharhi.– «Matenagirk' Hayots'», h. ZHE, ZH dar, Yerewan, ej 32–437 (In Armenian).

Movses Khorenats'i. 1991, Patmut'iwn Hayots', k'nnakan bnagiry yev nera-tsut'iwny M. Abegheani yev S. Yarut'iwneani, lrats'umnery, A. B. Sargseani, Yeryevan, HH GA hrat., 490 ej (In Armenian).

Nerses Bagrevandats'i. 2004, T'ught' meghadrut'ean ar yepiskoposunsn. – «Matenagirk' Hayots'», h. G, Z dar, Ant'ilias-Libanan, ej 418–420 (In Armenian).

Ormanean M. 2001, Azgapatum. Hay ughghap'ar yekeghets'woy ants'k'ery skizben minch'ev mer orery yarakits' azgayin paraganerov patmowats, h. A, Ejmiatsin, «Mayr At'vor S. Ejmiatsin», 1870 syunak (In Armenian).

P'awstos Buzand. 2003, Patmut'iwn Hayots'. – «Matenagirk' Hayots'», h. A, Ye dar, Ant'ilias-Libanan, "Armenian Catholicosate of Cilicia", ej 277–428 (In Armenian).

T'ovma Artsruni yev Ananun. 2010, Patmut'iwn tann Artsruneats'. – «Matenagirk' Hayots'», h. ZHA, ZH dar, Ant'ilias-Libanan, ej 46–313 (In Armenian).

Ukhtanes yepiskopos. 2011, Patmut'iwn Hayots'.– «Matenagirk' Hayots'», h. ZHE, ZH dar, Yerevan, "Armenian Catholicosate of Cilicia", ej 441–616 (In Russian).

Yeghishe. 2003, Vasn Vardanay yev Hayots' paterazmin. – «Matenagirk' Hayots'», h. A, Ye dar, Ant'ilias-Libanan, ej 521–764 (In Armenian).

ЦЕРКОВНО–ДИОЦЕЗАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ (428–630-ые годы)

ГЕНРИК ХАЧАТРЯН

Резюме

Ключевые слова: Марзпанская Армения, епископ Ухтанес, епархия, епископат, церковный собор, Багреванд, Мардпетакан.

Армянская церковь, со своей структурой и функциями, являлась неотъемлемой частью армянской государственности. Изучение ее истории, епархиального устройства, истории и статуса отдельных епархий, а также отношений между государством и церковью, церковью и знатью (князьями), а также контактов церкви с иностранными государствами в условиях отсутствия независимой государственности позволяет составить более точное представление о данных процессах. Несомненно, епархиальная структура марзпанского периода в той или иной степени, изучена однако в целом исследования в этой области были либо односторонними, либо неполными.

Известно, что в большинстве случаев епархиальное деление соответствовало политико-административному устройству страны. С этой точки зрения, после падения Армянского царства династии Аршакидов в 428 году епархиальное деление должно было в основном совпадать с границами Марзпанской Армении. Исследование источников показывает, что в период

установления христианства как государственной религии первый католикос Великой Армении – святой Григорий Просветитель (301–325), основал 36 епископских кафедр. Списки церковных соборов, а также данные списков епископов проливают свет на епархиальное деление марзпанского периода.

Согласно свидетельствам историков Егише и Лазаря Парпеци, в Марзпанской Армении существовало всего 18 епархий, число которых впоследствии увеличилось. Однако анализ источников и списков церковных соборов показывает, что количество епархий превышало 18, а сам термин «марзпанский период» требует уточнения в зависимости от конкретного временного отрезка.

Итак, имеем следующее деление епархий: 428–451 гг. – Айрарат (Востан), Тарон (Мамиконян), Маназкерт (Харк), Багреванд (включая Аршаруник), Бзнуник, Тайк, Басен, Мардаги, Мардастан, Сюник, Арцруняц, Рштуняц, Мокк, Вананд, Аматуняц, Андзевацяц, Апахуняц, Туруберан (Аршамуник), Багратуняц, Хорхоруняц, Гнуняц, Гогтан, Гардман, Акей, Бужуняц, Палуняц, Мехнуняц, Зареаван, Тморик, Айли.

506–630 гг. Айрарат (Востан), Тарон и Мамиконян, Харк, Багреванд (включая Коговит = Багратуни), Аршаруни, Бзнуняц, Тайк, Басен, Мардаги, Востан и Мардпетакан / Сепхакан Гунд, Сюник, Арцруняц, Рштуняц, Мокк, Вананд, Аматуни, Андзевацяц, Апахуняц, Аршамуник, Хорхоруняц, Гнуняц, Гогтан, Акей, Бужуняц, Палуняц, Мехнуняц, Зареаван, Тморик, Айли, Ерутак, Арна.

Генрик Хачатрян – к. и. н., научный сотрудник отдела средневековой истории Института истории НАН РА. Научные интересы: историческая география, история права Ирана и Армении. Автор 15 статей. ORCID:0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am

THE ECCLESIASTICAL DIOCESAN DIVISION OF MARZPAN ARMENIA (428–630s)

HENRIK KHACHATRYAN

S u m m a r y

Keywords: Marzpan Armenia, bishop Ukhtanes, dioces, episcopacy, church council, Bagrevand, Mardpetakan.

The Armenian Church, with its structure and functions, has been an inseparable part of the Armenian statehood. The study of its history, the diocesan structure, the history and status of individual dioceses, the relations between the state and the church, the church and the nobility (princes), as well as the church's

interactions with foreign states in the absence of an independent state, provides us with a more accurate understanding of the processes. Indeed, the diocesan structure of the marzpanate period has been addressed in one way or another, but, in the whole, the research conducted in this area was either one-sided or incomplete.

It is known, that for the most part, the ecclesiastical diocesan division corresponded to the political and administrative division of the country. From this perspective, after the fall of the Kingdom of Armenia under the Arsacid dynasty in 428, the ecclesiastical diocesan division was to coincide mainly with the borders of the Marzpan Armenia (Armenian marzpanate). The study of the sources indicates that during the establishment of Christianity as the state religion, the first Catholicos of Greater Armenia, St. Gregory the Illuminator (301–325), established 36 episcopal sees. The lists of church councils, as well as the data from the lists of bishops, shed light on the diocesan division of the Marzpanate period.

According to the historians Yeghishe and Ghazar Parpetsi, there were only 18 dioceses in the Marzpan Armenia, which later increased in number. However, the examination of the sources and the lists of church councils shows, that there were more than 18 dioceses, and the term “marzpanate period” needs to be clarified depending on the specific time frame.

Thus, we have the following division of dioceses: 428–451 AD – Ayrarat (Vostan), Taron (Mamikonyan), Manazkert (Hark), Bagrevand (with Arsharunik), Bznunyats, Tayots, Basen, Mardaghi, Mardastan, Syunik, Artsruni, Rshtuni, Mokats, Vanand, Amatunyats, Andzevatsyats, Apahuni, Turuberan (Arshamunik), Bagratuni, Khorhoruni, Gnuni, Goghtan, Gardman, Ake, Buzhunyats, Palunyats, Mehnunyats, Zarehavan, Tmorik, Ayli.

506–630 AD – Ayrarat (Vostan), Taron and Mamikonyan, Hark, Bagrevand (with Kogovit = Bagratunis), Arsharuni, Bznunyats, Tayots, Basen, Mardaghi, Vostan and the Mardpetakan/Sephakan Gund, Syunik, Artsruni, Rshtuni, Mokats, Vanand, Amatunyats, Andzevatsyats, Apahuni, Arshamunik, Khorhoruni, Gnuni, Goghtan, Ake, Buzhunyats, Palunyats, Mehnunyats, Zarehavan, Tmorik, Ayli, Yerutak, Arna.

Henrik Khachatryan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of Medieval History of the Institute of History of NAS RA. Scientific interests: historical geography, history of Law of Armenia and Iran. Author of 15 articles. ORCID: 0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am